«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Տեքստերի հետ տարվող աշխատանքների ժամանակակից ձևերը և դրանց արդյունավետությունը»

Կատարող՝ Հասմիկ Ալեքսանյան

Թիվ 2 ավագ դպրոց

Ղեկավար՝ Ա. Խաչիկյան

Երևան – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....**2**

2. Տեքստերի հետ տարվող աշխատանքների ժամանակակից ձևերը և դրանց արդյունավետությունը.....**3**

3. Հայոց - պատմական ռազմավարություն.....**6**

4. Հարցում ռազմավարություն

(self Questioning).....**8**

5. Եզրակացություն.....**11**

6. Գրականություն ցանկ.....**14**

Ներածություն

Կրթական համակարգի նորացումը, ուսուցման որակի և արդյունավետության բարձրացումը ենթադրում են սոցիալ տնտեսական, կառուցվածքային և ժամանակակից փոփոխություններ: Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է ժամանակակից կյանքում օտար լեզվի յուրացման պահանջով: Այսօր ավելի քան երբևէ անհրաժեշտ է դարձել անգլերենի՝ որպես օտար լեզվի կիրառման անհրաժեշտությունը յուրաքանչյուր մասնագիտական ոլորտում, որն իր հերթին կրթական հաստատություններին առաջադրել է նոր պահանջներ՝ կապված սովորողների լեզվական հաղորդակցական կոմպետենցիաների զարգացման հետ՝ ներառյալ նրանց կարողությունները: Վերջինս ենթադրում է սովորողների ռեցեպտիվ և **պրոդուկտիվ** խոսքային կարողությունների զարգացում: Բնականաբար այս համատեքստում էական է **ընթերցանության ուսուցման կարևորությունը:**

Տեքստերի հետ տարվող աշխատանքների ժամանակակից ձևերը և դրանց արդյունավետությունը

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել և բացահայտել ընթերցանության ուսուցման իրականացման գործընթացում կից փոփոխություններ զարգացում: Բնականաբար այս համատեքստում էական է **ընթերցանության ուսուցման կարևորությունը:**

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել և բացահայտել ընթերցանության ուսուցման իրականացման գործընթացում դպրոցականի լեզվահաղորդակցական կարողությունների զարգացման ուղիներն ու տեխնոլոգիաները:

Ընթերցողական կարողությունները ձևավորվում են աստիճանաբար: Բանն այն է, որ բանավոր գրավոր, ներքին ու արտաքին խոսքն անընդհատ ուղեկցվում է մտավոր բոլոր այն գործընթացներով, որոնք վերաբերում են ընթերցողական կարողությունների զարգացմանը: Մեր դպրոցներում տասնամյակներ շարունակ ուշադրություն էր դարձվում ընթերցանության սահունությանն ու մյուս բաղադրիչներին (բառերի ճշգրիտ ճանաչում, տեքստի վարժ ընթերցում համապատասխան արագությամբ, ընթերցում իմաստալից ելևէջներով, բառերի իմաստավորված խմբավորում) և ստվերում էր մնում էականը՝ըմբռնումը: Ուսուցչի կարևոր խնդիրն է կիրառել այնպիսի ռազմավարություններ ու հնարներ, որպեսզի աշակերտի համար բնագրի իմաստն առավել հասկանալի և ընկալելի լինի [19]:

Ուսումնական ռազմավարությունները գործունեություն և հաջորդական գործողություններ են, որոնք կիրառվում են սովորողների կողմից տեղեկատվության ստացման և պահպանման գործընթացների կատարելագործման նպատակով:

Հաղորդակցային կարողություններն օբյեկտիվորեն անհրաժեշտ գործողությունների խումբ է, որն ապահովում է ընթերցանության կամ խոսքային գործունեության այլ տեսակի տիրապետում: Հաղորդակցային կարողության էությունը անհատական ընթերցանության մեջ բնորոշվում

է որպես ինքնուրույն ունակություն՝ համապատասխան ուսումնական ռազմավարության, որը կարող է լուծել հաղորդակցային խնդիրներ տեքստերից տեղեկատվության դուրսբերման միջոցով՝ ձևավորված գիտելիքների և ունակությունների հիման վրա:

Ընթերցանությունն օտար լեզվով հանդես է գալիս որպես տվյալ առարկայական ոլորտում ինքնուրույն կրթական գործունեության հիմնական միջոց: Այս գործառույթը, որը համանման է մայրենի լեզվով ընթերցանությանը, ենթադրում է առանձնահատուկ ուշադրություն օտար լեզվի ռազմավարությունների, կարողությունների և հմտությունների զարգացման նկատմամբ:

Ընթերցանության ռազմավարությունը նպաստում է նյութի հետ իրականացվելիք աշխատանքի հստակ կազմակերպմանը, խորացնում է այն կոմպետենցիաները, որոնք հասցնում են տեքստի նպատակային ընթերցանության:

Այս դեպքում կարևոր է տարբերակել ծավալային և ինտենսիվ ընթերցանությունները:

Որպեսզի աշակերտները հնարավորինս առավելագույն օգուտ ունենան իրենց ընթերցանությունից՝ նրանք պետք է ներգրավվեն և ընդարձակ և ինտենսիվ ընթերցանության մեջ: Առաջինի դեպքում ուսուցիչը խրախուսում է աշակերտին՝ ինքնուրույն ընտրել ընթերցանության թեման, և դրա նպատակն այն է, որ աշակերտը այդ ընթերցանությունից հաճույք ստանա և ընդհանուր առմամբ բարելավի լեզվական գիտելիքները, իսկ ինտենսիվ ընթերցանության դեպքում, հիմնականում /բայց ոչ բացառապես/ ընթերցանության թեման ընտրվում և ուղղորդվում է ուսուցչի կողմից: Դա արվում է այն նպատակով, որ աշակերտները ձեռք բերեն և զարգացնեն՝

- հատուկ ընկալողական հմտություններ /կամ ընդհանուր հասկացողության համար/,
- ընթերցանություն՝ տեղեկատվություն ստանալու համար,
- ընթերցանություն՝ մանրամասն ընկալման և տեղեկատվություն

ստանալու համար

- ընթերցանություն՝ բառերի «հետևանքն» ու վերաբերմունքը հասկանալու համար [Harmer 2004: 283-284]:

Մասնակից անելով, նշենք, որ ծավալային ընթերցանությունն (extensive reading) իրենից ներկայացնում է ժամանակի տևական հատվածում առանց մասնակի կանգառների և անհարմարավետության զգացողության ծավալային տեքստերի ընթերցանություն: Ծավալային ընթերցանությունը տիրապետում է բազմաթիվ առավելությունների, որի միջոցով սովորողներն ընդլայնում են իրենց աշխարհայացքը, բառապաշարը, կատարելագործում են գրավոր ունակությունները և արտասանությունը, մեծանում է ընթերցանության արագությունը, ձևավորվում է սեր ընթերցանության նկատմամբ: Այն կարող է կիրառվել թե դասարանում և թե որպես տնային առաջադրանք և ամառային առաջադրանք: Ռազմավարության վրա ազդող գործոնները կապված են մի շարք նյութերի հետ՝

- անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների մակարդակները (այս բարդությունը հեշտ է հեռացնել ադապտացված գրքերի կիրառության միջոցով (graded readers)).
- Նյութի համառոտագրություն (այն պետք է համապատասխանի հարցումներին և սովորողների հետաքրքրություններին).

Ռազմավարություն, որն օգնում է հասնելու տեքստի առավել լիարժեք ըմբռնման, ինչպես նաև ակտիվացնում է անկախ ընթերցողի ավելի վաղ ստացված գիտելիքները: Ծավալային ընթերցանության համար հաջող ծրագրի հիմանական պայմաններից մեկն այն է, որ աշակերտը պետք է կարդա այն նյութերը, տեքտերը, որը հեշտությամբ նա կարող է հասկանալ: Եթե աշակերտը խնդիր է ունենում ամեն մի բառը հասկանալ-ընկալելու համար, ապա, դժվար թե, նա իր ընթերցանությունից հաճույք ստանա, որն էլ այս տեսակ ընթերցանության գլխավոր նպատակն է [Harmer 2004: 283-284]: Խոսելով ընթերցանության ռազմավարությունների մասին՝ մասնակիացնենք Ջ. Շիլզի ներկայացրած ընթերցանության

կոմպետենցիաների զարգացման ռազմավարությունները իրենց փուլերով և առաջադրանքներով՝ **մինչընթերցանություն, բուն ընթերցանություն, հետընթերցանություն,** որից հետո սովորողները յուրացնում են ընթերցանության ընթացքը և իրականացնում վարժ ընթերցումը: Մինչ ընթերցանություն քննարկումը սովորող-ներին պատրաստում է այն բանին՝ ինչ նրանք ընթերցելու են: Ընթերցանության ընթացքում սովորողները արդյունավետորեն կարող են հետևել առկա գիտելիքների և նյութի միջև կապերին, անհրաժեշտության դեպքում բարձրաձայն մտորել: Ընթերցանությունից հետո սովորողները ուշադրության շեշտը դնում են այն բանին, ինչպես կարող են այդ կապերը օգնել նրանց հասկանալու տեքստը և խորացնելու արդեն առկա գիտելիքները [Sheils 1993:142]:

Ներկայացնենք յուրաքանչյուր փուլն իր նպատակներով, ռազմավարություններով և առաջադրանքներով:

Հարց-պատասխան ռազմավարություն.

Հարցեր տալու կարողությունը բանալի դեր է խաղում ընթերցանության ուսուցման գործընթացում: Հաջող ընթերցանությունը ոչ թե պազապես ″ապակոդավորված″ տեքստ է, այլ նաև ակտիվ ճանաչողության գործընթաց: Լավ ընթերցողները մոտենում են տեքստին հարցերով և նոր հարցեր են տալիս ընթերցանության գործընթացում և ընթերցանությունից հետո:

Կաղապարային հարցերը, որոնք կարող են սովորողները տալ ընթերցելուց առաջ՝

- Ի՞նչ է հուշում մեզ անվանումը/ տեքստի վերանգիր, սյուժե
- Ի՞նչ գիտեմ արդեն ես այդ տեքստի մասին
- Ի՞նչ սպասումներ ունեմ ես/տեքստի ընթերցանությունից:

Ընթերցանության ընթացքում սովորողները կարող են կիրառել «մտքեր/հարցեր բարձրաձայն» տեխնիկան, ընթերցանության ընթացքում արտասանում են այն, ինչի մասին են մտածում ընթերցվածի հետ կապված: Սովորողները կարող են տեքստում ընտրել նաև մի քանի

եզրահանգումային կետեր և տալ հարցեր: Կանգառները պետք է շատ հաճախակի չլինեն, որպեսզի չխոնչընդոտել ընկալմանը և չնվազեցնել ընթերցանության տեմպը: Սա հնարավորություն է տալիս ուղղել սխալ ընկալումը:

Կարևոր է շեշտը դնել ոչ միայն ճիշտ պատասխանի որոնմանը, այլ, հետաքրքրասիրության, խորացմանը, բովանդակության վերհանման նպատակով:

Երբեմն կարելի է կիրառել նաև «բարձրաձայն ընթերցանության» տեխնիկան, որն օգնում է համապատասխանություն գտնել գրավոր և բանավոր խոսքի միջև, հանդիսանում է երկխոսության ներկայացման համար բավականին լավ հենք, բացի դրանից, տալիս է ռիթմի, շեշտադրության, արտասանության, արտահայտման մոդել (իրականացնում է մոդելավորող գործառույթ).

Տեքստի ամփոփ ներկայացումը կայանում է սեփական բառերով նյութի իրենց տարբերակը արտահայտելու կարողության մեջ, որտեղ շարադրվում է հիմնականը և բաց է թողնվում անէականը: Ավելին քան վերապատմումը՝ ենթադրում է վերլուծություն, կարևորի տարբերակումն անկարևորից և մեծ ծավալով տեղեկատվության մեկնաբանություն մի քանի նախադասություններով: Տարբերակում ենք նաև վերապատմումը (paraphrasing) – որն իրենից ներկայացնում է իր բառերով տվյալ նախադասությունների ներկայացում, որպես օրենք տեղեկատվության մասերը նյութի մեջ են:

Տեքստի համառոտ ամփոփումն ունի շատ նպատակներ՝

Դասավանդողին օգնում է հետևելու նյութի ընկալմանը: Սովորողներին օգնում է հասկանալ տեքստի բովանդակության կառուցվածքը: Զարգացնում է մտածողությունը, թույլ է տալիս բարձրացնել ընթերցանության նոր մակարդակ, սովորեցնում է վերլուծության և համադրության: Օտար լեզվով ընթերցանության կոմպետենցիաների զարգացումը հետապնդում է խոհուն ընթերցողի կայացում, որը ուղի է հարթում հաղորդակցության կոմպետենցիաների

զարգացմանը: Այդ դեպքում սովորողները գիտակցում են ընթերցանության նպատակները, կատարում են կանխագուշակումներ և ենթադրություններ, ընթերցում են ընտրողաբար, ծնում են զուգորդություններ նրա հետ, ինչ արդեն գիտեն կամ կարդացել են, կիրառում են ենթատեքստը անծանոթ բառերի ընկալման համար, վերընթերցում են և կատարում նշումներ, գնահատում են տեքստի որակը, համառոտագրում են տեքստի կաևոր մասերը, պատկերացնում են տեղեկատվությունն ինչպես կարող է կիրառվել հետագայում [Sheils 1993:81-139]:

Ընթերցանական ռազմավարություններում կարելի է տարբերակել նաև լրացման ռազմավարություն (Cloze): Այս ռազմավարությունը իր բնույթով որոշակիորեն լրացնում է (Gap-filling-լրացում ռազմավարություն) ռազմավարությանը, սակայն սովորողները առնչվում են ոչ միայն առանձին բառերի, այլև ընդարձակ տեքստի հետ:
Ուսուցիչը տեքստից բաց է թողնում իմաստային տեսանկյունից կարևոր բազմաթիվ բառեր, սովորողները ընթերցելու ժամանակ դրանք լրացնում են:

Այս ռազմավարությունն ենթադրում է նաև հետևյալ վարժությունները սովորողների կողմից տեքստի որոշակի հատված ընթերցելուց հետո: Նրանք

- միացնում են նախադասությունները պարբերության մեջ,
- միացնում են երկու պարբերությունները,
- որոշում են պարբերությունների հիմնական միտքը,
- առանձնացնում են այն նախադասությունները, որտեղ կան առանցքային բառեր, տերմիններ կամ տերմինակապակցություններ:

Հարցում ռազմավարությունը(Self Questioning/ Questioning)

Այս վարժության ժամանակ սովորողները փորձում են պատասխանել ընթերցած տեքստին վերաբերող հարցերին: Դա օգնում է ավելի լավ համատեղել նախկինում ունեցած բառապաշարային գիտելիքները տեքստում պարունակվող լեզվական նյութի հետ:

Այսպիսով, ընթերցումը /բառարանով կամ առանց բառարանի/՝ որպես խոսքային գործունեության տեսակ, ունի իր յուրահատուկ հաղորդակցական խնդիրը. այն տեղեկատվություն ստանալու աղբյուր է: Ընթերցանությունը ենթադրում է առնվազն մի շարք հիմանական կարողություններ. Ընդհանուր բովանդակության ընկալում, տեղեկատվության որոնում, բովանդակության ամբողջական և մանրամասն ընկալում:

Այսպիսով ուսուցիչները և աշաակերտները կարևորում են ընթերցանության դերը բանավոր խոսքի և խոսքային հմտությունների ու կարողությունների զարգացման գործընթացում;

- Ուսուցիչները դասերի ընթացքում կիրառում են նախա/բուն/հետ ընթերցանական ռազմավարություններ;
- Դասերի ընքացքում կիրառում են նաև ակտիվ ուսումնառության մեթոդները, տեքստերի յուրացումն առավել դյուրին դարձնելու նպատակով;
- Մինչ նոր թեմայի անցկացումը ուսուցիչները մշակում են համապատասխան վարժություններ և մեթոդներ տեքստի բառանյութի և բովանդակության իմաստային ընկալման համար;
- Աշակերտները կարևորում են ընթերցանության դերը;
- Նրանք համամիտ են որ բառանյութի յուրացումը և տեքստի իմաստային ընկալումն օգնում են կատարել առաջադրանքները և զարգացնել բանավոր խոսքը՝
- Իրականացված փորձարարական դասը ցույց տվեց, որ որոշ աշակերտների մոտ առկա է շփման և ազատ խոսելու վախ;
- Նրանց մոտ նկատելի են որոշակի քերականական և արտասանական թերություններ;
- Դասերին ցուցաբերում են ակտիվ մասնակցություն և փորձում են հաղթահարել լեզվական խնդիրները;
- Կարողանում են համատեղ աշխատել և կատարել տեքստի հետ կապված յուրաքանչյուր առաջադրանք:
- Բանավոր խոսքը սովորողների մոտ դեռ կարիք ունի համալրվելու նորանոր բառապաշարներով առավել բարդ և հարուստ լինելու համար, քանի որ սովորողների խոսքային կիրառությունն պարզ է և համառոտ:

Մասնագիտական բառանյութ ուսուցանելիս կարևորվում է բառապաշարային գիտելիքները զարգացնող այն ռազմավարությունները, որոնք համապատասխանաբար ուղղված են սովորողների ընկալողական, հաղորդակցական, խոսքային կարողությունների զարգացմանը: Դրանք գլխավորապես ունկնդրելու և ընթերցանության կարողությունները զարգացնող վարժություններն են: Մեր կողմից ներկայացվող փաթեթում վարժությունները նախատեսված են սովորողների ընդհանուր լեզվական իրազեկության ձևավորման ու զարգացման համար:

Լեզվանյութի, տվյալ պարագայում բառապաշարի ընկալման և յուրացման գործընթացները կառավարվում են համապատասխան նպատակներից բխող առաջադրանքների միջոցով: Այստեղ մեծ նշանակություն ունի առաջադրանքի բնույթը, այսինքն՝ կոնկրետ գործողության ուղղվածությունը և ընկալումն ապահովող ռազմավարությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքի արդյունքում պարզեցինք, որ .

• Ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության տեսակ, ունի իր յուրահատուկ հաղորդակցական խնդիրը. այն տեղեկատվություն ստանալու աղբյուր է և ենթադրում է հետևյալ հիմնական կարողությունները՝ ընդհանուր բովանդակության ընկալում, տեղեկատվության որոնում, բովանդակության ամբողջական և մանրամասն ընկալում: Ավագ դպրոցում ուսուցման խնդիրն է լուռ ընթերցելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Բարձրաձայն ընթերցանությունը անցումային փուլ է դեպի լուռ ընթերցանություն:

• Ընթերցանությունը որպես ընկալողական խոսքային գործունեության տեսակ ենթադրում է՝ տեքստի ընթերցում ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար, ընթերցում , տեքստից տեղեկություններ ստանալու համար, ընթերցել տեքստը ամենայն մանրամասներով ըմբռնելու համար:

• Ընթերցանության ուսուցման սկզբունքները ենթադրում են՝ ընթերցանությունը ուսուցվում է որպես խոսքային գործունեություն, ընթերցանության ուսուցումը պետք է դիտել որպես ճանաչողական խնդիրների լուծման գործընթաց, ընթերցանության ուսուցումը օտար լեզվում հենվում է սովորողների մայրենի լեզվից ձեռք բերած ընթերցանության փորձի վրա:, ընթերցանության ուսուցումը հենվում է յուրացվող լեզվական կառուցվածքների վրա:

• Ընթերցանության մեջ ուսուցչի կարևոր խնդիրն է կիրառել այնպիսի ռազմավարություններ ու հնարներ, որպեսզի աշակերտի համար բնագրի իմաստն առավել հասկանալի և ընկալելի լինի: Ուսումնական ռազմավարությունները գործունեություն և հաջորդական գործողություններ են, որոնք կիրառվում են սովորողների կողմից տեղեկատվության ստացման և պահպանման գործընթացների կատարելագործման նպատակով: Ընթերցանության ռազմավարությունը

նպաստում է նյութի հետ իրականացվելիք աշխատանքի հստակ կազմակերպմանը, խորացնում է այն կոմպետենցիաները, որոնք հասցնում են տեքստի նպատակային ընթերցանության:

• Ընթերցանության ռազմավարությունների կիրառումը հաղորդակցության իրականացման նպատակով մեծ դեր է խաղում սովորողների բանավոր խոսքի զարգացման գործընթացում: Լեզվախոսքային զարգացումը և ձևավորումը տեղի է ունենում նախա բուն և հետ ընթերցանական գործունեությունների ժամանակ:

• Ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը ծագում է, երբ ընթերցողը ազատ կերպով տիրապետում է գիտակցված ընթերցանության և նրա մոտ զարգացած են ընթերցանության ուսումնաճանաչողական դրդապատճառները: Ընթերցողական գործողությունների տիրապետման պայմանը հանդիսանում է նաև ընթերցման միջոցը, տեքստի իմաստային վերամշակման միջոցները, որոշակի ունակությունների և հմտությունների տիրապետումը, որոնք չպետք է զարգանան տարերայնորեն:

• Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ընթերցանության դերը ուսուցման մեջ մեծ է:

• Անկետավորման արդյունքները համապատասխանաբար ցույց տվեցին, որ ուսուցիչները և աշակերտները կարևորում են ընթերցանության դերը, կիրառում են նոր մեթոդներ և հնարներ՝ տեքստերն առավել մատչելի և ընկալելի դարձնելու նպատակով, ինչպես նաև զարգացնում են գրավոր և բանավոր հաղորդակցային հմտությունները համապատասխան վարժությունների միջոցով՝ նախա/բուն և հետ ընթերցանական: Իհարկե սովորողների մոտ առկա են նոր բառապաշարի յուրացման և որոշակի իմաստային ընկալման բարդություններ, սակայն ուսուցիչները փորձում են առավելագույնս մատչելի մատուցել, կիրառել նորանոր մեթոդներ դասն արդյունավետ և ընկալելի դարձնելու նպատակով:

Ելնելով հետազոտության արդյունքներից կարծում ենք ավելի արդյունավետ կլինի եթե.

• Ուսուցչները մշակեն նոր տեքստեր և կազմեն ուսումնական

փաթեթներ, որոնք կնպաստեն սովորողների ընթերցողական կարողությունների զարգացմանը և բանավոր խոսքի կիրառմանը:

- Դասագրքերում նախատեսված վարժությունները և տեքստերը նորագույն մեթոդներով մեկ դասաժամում անցնելն առաջացնում է բավականին խնդիրներ կապված դասաժամի հետ: 45 րոպեում ուսուցանել նորագույն տաբեր մեթոդների միջոցով՝ պարզապես անհնար է, ուստի առաջարկում ենք տնային հանձնարարությունների միջոցով նպաստել սովորողների մոտ օտար լեզվի կարողությունների զարգացմանը:
- Անհրաժեշտ է հաճախակի կիրառել նորանոր մեթոդներ դասերն առավել հետաքրքրական և տեքստերը դյուրին դարձնելու նպատակով:
- Սովորողներին սովորեցնել ընթերցել և կարողանալ ընկալել անհրաժեշտ բառանյութը, իմաստավորել նոր բառերի հետ կապված բովանդակությունը, ինչպես նաև կարողանալ գնահատել ընթերցվածը:
- Ընթերցանության ժամանակ հատկապես ուշադրություն դարձնել տեքստերի ճիշտ, սահուն, գիտակցված և արտահայտիչ ընթերցանությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ. Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Լույս հրատ, Երևան 1985
2. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Ստրասբուրգ, /հայերեն թարգմանություն/. Նորք Գրատուն, Երևան, 2005
3. Հայաստանի լեզվակրթության քաղաքականության ուրվագիծ, Ազային զեկույց Երևան, 2008
4. ՀՀ Կրթության եվ գիտության նախարարություն կրթական ծրագրերի կենտրոն,անգլերեն, Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, Երևան 2009: 8
5. Մանկավարժություն, Մարինե Մանուկյան Չափորոշչահեն իրականացման խնդիրները, ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային Ինստիտուտ, Երևան 2014
6. Մանկավարժություն, Թամարա Միրզոյան Ընթերցողական կարողությունների ձեվավորման ռազմավարություններ, Երևան, ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային Ինստիտուտ 2015
7. Теоретические основы методики обучения иностранным языкам в средней школе.Сборник, Москва, 1981
8. Фоломкина С. К., Некоторые вопросы обучения чтению на иностранном языке, ИЯВШ, вып 6, М., 1974, с 5]:
9. “Realizing the European Higher Education Area”, Communique of the Conference of Ministers Responsible for Higher Education. Berlin, Sept., 2003.
10. Adler, R., Rosenfield, L. and R. Proctor. Interplay: the Process of Interpersonal Communication. NY, Oxford University Press 2012